

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19/02

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

7 մայիսի 2019թ.

### Մասնակիցների ցուցակ՝

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան  | 6. Իգոր Մկրտումյան    |
| 2. Աննա Կարախանյան | 7. Կոյա Հովհաննիսյան  |
| 3. Արամ Վերոյան    | 8. Սիրանուշ Վարդանյան |
| 4. Արման Ներսիսյան | 9. Քրիստինա Հակոբյան  |
| 5. Գրիգորի Սադյան  | 10. Քրիստինե Գյոնջյան |

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Աննա Կարախանյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Առաջարկություն հնչեց օրակարգում ներառել դիմում ներկայացրած մի շարք անձանց կազմակերպությանն անդամագրելու մասին հարցը: Ձայների 6 կողմ, 3 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ առաջարկությունն ընդունվեց:

### Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում ներառվելիք՝ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործունեության առարկային և նպատակին հավանություն տալու մասին
2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին
3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծի այլ հիմնադրույթների քննարկում:

1. **«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում ներառվելիք՝ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործունեության առարկային և նպատակին հավանություն տալու մասին**

Նիստը նախագահողը տեղեկացրեց, որ կազմակերպության վարչության նախորդ նիստում ծավալված քննարկումների արդյունքում կազմվել և կազմակերպության վարչության անդամներին է ներկայացվել կազմակերպության գործունեության առարկային և նպատակին վերաբերող երկու տարբերակ: Տարբերակները ներկայացվելուց հետո ծավալվեց քննարկում: Քննարկման արդյունքում ձայների 8 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ կազմակերպության վարչությունը հավանության արժանացրեց առաջին տարբերակը (Կազմակերպության գործունեության առարկան է՝ կառավարել «.am» և «.hայ» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթները, իսկ նպատակը՝ նպաստել Հայաստանի Հանրապետությունում ինտերնետի զարգացմանը):



**Որոշում:** *Հավանություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործունեության առարկային և նպատակին և ներառել Կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում:*

**2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Ա.Ներսիսյանը՝ նշելով, որ Կազմակերպությունը մի շարք անձանցից (թվով 30 անձ) ստացել է Կազմակերպությանն անդամագրվելու վերաբերյալ դիմումներ և ներկայացնելով Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձանց: Առաջարկություն հնչեց բավարարել ներկայացված դիմումները: Առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 9 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունվեց:


**Որոշում:** *Բավարարել Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած 30 անձանց (ցանկը կցվում է) դիմումները և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:*

**3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծի այլ հիմնադրույթների քննարկում**

Նիստը նախագահողը քննարկման ներկայացրեց կազմակերպության անդամ դառնալու իրավասություն ունեցող անձանց շրջանակների հստակեցման հարցը՝ նշելով, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է ստեղծում իրավաբանական անձանց անդամագրվել հասարակական կազմակերպությանը: Հարցի վերաբերյալ ծավալվեց քննարկում: Առաջարկություն հնչեց Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձանց հնարավորություն տալ անդամագրվելու կազմակերպությանը, ինչպես նաև առաջարկվեց գործադիր տնօրենին՝ ներկայացնել անդամագրման կարգի վերաբերյալ նախագիծ: Առաջարկությունները դրվեցին քվեարկության և ձայների 6 կողմ 1 դեմ և 3 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունվեցին:

**Որոշում:** *1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ դառնալու հնարավորություն տալու առաջարկին և ներառել Կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում:*  
*2. Առաջարկել կազմակերպության գործադիր տնօրենին՝ ներկայացնել կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում ներառվելիք Կազմակերպության անդամ դառնալու կարգի վերաբերյալ առաջարկություններ*

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝

Աննա Կարախանյան